ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2017 թ. սեպտեմբերի 22-ին ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը կդառնար 90 տարեկան: Այս առթիվ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և Պատմության ինստիտուտը միջոցառումներ անցկացրին ականավոր պատմաբանի հիշատակին: Առավոտյան նրա շիրմին խունկ ծխելուց ու ծաղիկներ խոնարհելուց հետո, Պատմության ինստիտուտում Վ. Բարխուդարյանի ընտանիքի անդամների ու բազմաթիվ հյուրերի ներկայությամբ "Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության" բաժինն անվանակոչվեց ակադեմիկոս Վ. Բարխուդարյանի անունով:

Այստեղ է գտնվում ակադեմիկոսի գրադարանը, անձնական որոշ իրեր, ինչպես նաև՝ այն անփոխարինելի գիտական, ջերմ մթնոլորտը, որը երկար տարիներ այս բաժնի վարիչների՝ ականավոր գիտնականներ Վազգեն Ոսկանյանի, Վարդգես Միքայելյանի և Վլադիմիր Բարխուդարյանի շնորհիվ պահպանվել, փոխանցվել ու կրթել է հայ գաղթօջախների մասնագետների մի քանի սերունդ: Գուցե այդ մթնոլորտն էր պատճառը, որ ներկաները՝ լինեն բարձրաստիճան պաշտոնյաներ, թե գիտաշխատողներ՝ սրտաբուխ խոսքերով ու բնութագրումներով, գեղեցիկ և կենդանի հիշողություններով, գողտրիկ հյուրասիրությամբ, ստիպեցին մեկ անգամ ևս զգալ ակադեմիկոսի ներկայությունն այն սրահում, ուր նա շուրջ կես դար էր անցկացրել իր գործընկերների հետ:

Օրվա երկրորդ կեսն առավել պաշտոնական բնույթ էր կրում: Ակադեմիայի նախագահության նիստերի դահլիճը բազմամարդ էր. այստեղ էին ակադեմիայի նախագահության անդամները, ինստիտուտների տնօրեններ ու գիտաշխատողներ, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ամբիոնի վարիչներ ու դասախոսներ, ինչպես նաև՝ Վ. Բարխուդարյանի ընտանիքի անդամները և ընկերները:

Բացման խոսքով հանդես եկավ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը*: Լինելով Վ. Բարխուդարյանի երկար տարիների գործընկերը՝ նրա խոսքն ավելի քան անմիջական էր ու սրտառուչ: Խոսելով Վ. Բարխուդարյանի մասին՝ որպես Գիտությունների ազգային ակադեմիայի "նահապետի", նա նշեց, որ ակադեմիայի կյանքը կարելի է բաժանել նախաբարխուդարյանական ու ետբարխուդարյանական շրջանների: Բնութագրելով ակադեմիկոսին որպես գիտության անխոնջ մշակի և անփոխարինելի ընկե-*

րոջ՝ Ռ. Մարտիրոսյանն երիտասարդ գիտնականներին հորդորեց օրինակ վերցնել ականավոր պատմաբանի գիտական և կենսաբարոյական հարուստ փորձից: Ակադեմիայի նախագահը, իր խոսքում անդրադառնալով Վ. Բարխուդարյանի բնավորության կարևոր գծերին, խոսեց նրա հավատարմության և նվիրվածության մասին Հայաստանի գիտությունների ակադեմիային: Տարբեր տարիներ, զանազան բարդ իրավիճակներում նա առանց վարանելու կանգնել է ակադեմիայի շահերի պաշտպանության դիրքերում՝ անգամ ընդդիմանալով հանրապետության նախագահներին և որպես կանոն՝ հաջողելով: Եզրափակելով իր խոսքը՝ ակադեմիայի նախագահը ցավով նշեց, որ մի քանի ամիս էր բաժանում Վ. Բարխուդայանին իր իննսունամյա հոբելյանից, այդուհանդերձ նրա կենդանի ներկայությունը դեռ զգալի է հայոց այս կաճառի սյուների ներքո, ուր ամեն անգամ մուտք գործելիս նա պարտադիր հանում էր գլխարկը, ի հարգանս հայոց գիտության և այն կերտող մեծագույն ռահվիրաների:

Ընթերցվեց ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի ուղերձը, ուր նշվում էր պատմաբանի հսկայական ներդրումը հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության ուսումնասիրման, ինչպես նաև՝ այս հարցում Հայաստանի ու Սփյուռքի մասնագետների համատեղ գիտական գործունեության զարգացման գործում:

Ապա ելույթ ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արարողակարգի և արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը*, ով, արժևորելով Վ. Բարխուդարյանի գիտական վաստակը, անդրադարձավ Էջմիածնի Բարձրագույն հոգևոր խորհրդում պատմաբանի գործունեությանը, նրա մեծ ավանդին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան և դրա գիտական գործունեության կայացման հարցում: Մայր Աթոռի կողմից ակադեմիկոսն արժանիորեն պարգևատրվել է Ս. Էջմիածնի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շքանշանով:*

Ակադեմիայի Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յու. Սուվարյանն *իր խոսքում նշեց, որ, թերևս, սակավ են եղել համատեղ աշխատելու տարիները, սակայն դա էլ բավական էր հասկանալու, որ Վ. Բարխուդարյանն առանձնահատուկ անձնավորություն էր՝ իր կոչմանը հավատարիմ, գիտակազմակեպչական գործունեությանը զուգահեռ ամեն տարի հրատարակելով արժեքավոր գիտական հոդվածներ ու մենագրություններ, խմբագրելով ակադեմիական ժողովածուներ, "Հայոց պատմության" դպրոցական դասագրքեր, ղեկավարելով ասպիրանտների: Յու. Սուվարյանի խոսքերով, Վ. Բարխուդարյանը կյանքի վերջին շրջանում դարձել էր ակադեմիայի խորհրդանիշերից մեկը, խաղաղության աղավնի՝ ծագող անհատական և կոլեկտիվ կոնֆլիկտների լուծման ու կարգավորման հարցերում, ինչը, չնայած իր ծայրահեղ համեստությանը, վկայում էր նրա վաստակած վիթխարի հեղինակության և մարդկային վեհանձն կերպարի մասին: Նա իսկական հայ*

մտավորական էր, որին ճանաչում, գնահատում ու հարգում էին թե՛ Հայաստանի Հանրապետությունում, թե՛ նրա սահմաններից դուրս գործող հայագիտական ու մշակութային կենտրոններում:

Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Մելքոնյանն *իր հակիրճ խոսքում նշեց, որ Վ. Բարխուդարյանն ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել հանրապետության պատմագիտական մտքի ձևավորման ու զարգացման գործում՝ երկար տարիներ լինելով Գիտությունների ակադեմիայի պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի, Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի, բարձրագույն որակավորման հանձնաժողովի և այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ: Նա լուրջ ներդրում ունի Պատմության ինստիտուտի հրատարակած հայ ժողովրդի հնագույն շրջանից մինչև մեր օրերն ընդգրկող պատմության ակադեմիական ութհատորյակի ստեղծման (1960–1970-ական թվականներ) գործում՝ որպես հեղինակ, խմբագիր և գիտակազմակերպական աշխատանքների համակարգող: Նրա լուման մեծ է նաև ինստիտուտի կողմից ներկայումս հրատարակության ընթացքում գտնվող "Հայոց պատմության" հատորների ստեղծմանը: Ակադեմիկոսի մասնակցությամբ ու խմբագրությամբ լույս են տեսել "Հայ գաղթաշխարհի պատմության" երեք հատորները: Անուրանալի է Վ. Բարխուդարյանի եռանդն ու ազգանվեր գործունեությունը Հայաստանում և Սփյուռքում՝ հայագիտական ուժերի համախմբման, մեր երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող հումանիտար գիտությունների շարունակական զարգացումն ապահովելու համար:*

Վ. Բարխուդարյանի մասին իրենց մտորումներով կիսվեցին նաև ակադեմիկոս Վ. Հակոբյանը, *Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան* Է. Մինասյանը, *սփյուռքահայ հասարակական գործիչ* Ե. Փամբուկյանը, *պատմաբան, "Վեմ" ամսագրի գլխավոր խմբագիր* Գ. Խուդինյանը *և ուրիշներ:*

Միջոցառման պաշտոնական մասը շարունակվեց գրքերի շնորհանդեսով: Վ. Բարխուդարյանի 90-ամյա հոբելյանի առթիվ Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ հրատարակվեց երկու հատոր, որոնցից առաջինը պատմաբանի "Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում 9–11-րդ դարերում" թեմայով դեռևս անտիպ թեկնածուական ատենախոսությունն էր, որը, Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի նախաձեռնությամբ՝ որպես մենագրություն, հանձնվեց պատմաբանների լայն շրջանակների ուշադրությանը:

"Վլադիմիր Բարխուդարյան–90" վերտառությամբ երկրորդ հատորյակն ամփոփում է ակադեմիկոսի կյանքի և գիտակազմակերպչական գործունեության համառոտ ակնարկը, հրատարակությունների ժամանակագրական ցանկը, նրա

աշխատությունների և հոդվածների մասին տարբեր տարիների ու հեղինակների կողմից հրատարակված գրախոսություններ և կարծիքներ, նրան ուղղված հոբելյանական շնորհավորանքներ, հուշեր ու գեղեցիկ պատմություններ, որոնց առանցքում մեծ գիտնականն է, անփոխարինելի ընկերն ու իր հողին և հայրենիքին անմնացորդ նվիրված քաղաքացին: Հատորյակը հարստացնում են Վ. Բարխուդարյանի կյանքի տարբեր շրջաններին ու ոլորտներին վերաբերող լուսանկարները:

Այնուհետև ցուցադրվեց Հ3 հեռուստաալիքի նախաձեռնությամբ իրականացված "Մի կյանքի պատմություն. Վլադիմիր Բարխուդարյան" ֆիլմը:

Հոբելյանական միջոցառումները եզրափակվեցին Պատմության ինստիտուտի "Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության" բաժնի կազմակերպած գիտական նստաշրջանով: Բովանդակալից զեկուցումներով հանդես եկան բաժնի վարիչ, պ. գ. դ. Գևորգ Ստեփանյանը (*"Շամախիի թեմական դպրոցի պատմությունից"), գիտաշխատողներ, բ. գ. թ.* Արծվի Բախչինյանը *("Հայերի ներկայությունը Օվկիանիայում")*, Էլիզաբեթ Թաջիրյանը *("Աղդոլոների պատկերասրահը Ֆլորենցիայում, 18-րդ դար"), պ. գ. թ.,* Վահրամ Ղարախանյանը *("Հայ-հրեական առնչությունները, պատմական ակնարկ. վաղ ժամանակներից մինչև մեր օրերը"), պ. գ. թ.,* Քնարիկ Ավագյանը *("ԱՄՆ-ի հայերը հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում XX դ. – XXI դ. սկիզբ"), պ. գ. թ.,* Հովհաննես Ալեքսանյանը (*"Հայերը Լեհաստանում և Մերձբալթյան հանրապետություններում արդի փուլում") և պ. գ. թ.* Վահե Սարգսյանը *("Ջավախահայության դիրքորոշումը 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեի նկատմամբ"):*

Վ. Բարխուդարյան պատմաբանն իր՝ հայրենի մտավորականի նշանակալից կերպարով ու գործունեությամբ երկար կապրի հայ պատմագիտական մտքի ներկայացուցիչների աշխատանքների և հիշողությունների մեջ:

ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱՋԻՐՅԱՆ